Հայ- ֆրանսիական գիտական համագործակցություն

2009 թ. հունվարի 20-ին Փարիզում կնքվեց գիտական համագործակցության մասին պայմանագիր ՀՀ կրթության եվ գիտության նախարարության եւ Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (Centre national des recherches scientifiques - CNRS) միջեւ: Այն ստորագրելու նպատակով հունվարի 19-23-ը Ֆրանսիայի Հանրապետությունում էր գտնվում ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Ֆրանսիական կողմից պայմանագիրն ստորագրեցին ԳՀԱԿ նախագահ Կատրին Բրեշինյակը եւ գլխավոր տնօրեն Առնոլդ Միգուսը:

Պայմանագրի շրջանակներում նախատեսվում են երկու երկրների միջեւ գիտնականների փոխանակում, համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացում, գիտաժողովների եւ սեմինարների կազմակերպում: Պայմանագրով նախատեսվող ծրագրերն ու միջոցառումները կիրականացվեն համատեղ ֆինանսավորմամբ՝ ԳՀԱԿ-ի գիտական համագործակցության միջազգային ծրագրերի, միացյալ միջազգային լաբորատորիաների եվ միջազգային գիտահետազոտական խմբերի օժանդակությամբ: Նախատեսվող ծրագրերում շեշտը կդրվի երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ոլորտների վրա՝ հատկապես ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, հումանիտար եվ սոցիալական գիտությունների:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ կոնկրետ գիտական ծրագրերի շուրջ ԳՀԱԿ-ի հետ համագործակցության հնարավորությունները, ինչպես նաեւ ԳՀԱԿ Անդրկովկասի ներկայացուցչությունը Հայաստանում ստեղծելու հարցը: Վերջինին կենտրոնի ղեկավարությունը դրական է արձագանքել՝ հաշվի առնելով ՀՀ գիտական ենթակառուցվածքները եվ գիտական ներուժը՝ միաժամանակ նշելով, որ ՀՀ-ում ԳՀԱԿ ներկայացուցչություն ստեղծելու հարցը կախված է վերը նշված ծրագրերի իրականացման արդյունքներից:

Հանդիպման ժամանակ գոհունակությամբ արձանագրվել է, որ պայմանագրի կնքմամբ հայ-ֆրանսիական գիտական երկարամյա համագործակցությունը վերջապես պաշտոնական հիմքի վրա է դրվում եվ դրանով զարգացման նոր հնարավորություններ ստանում: